Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 33/5 հասցեի բնակելի տան հողամասին կից 685,3 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 210,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 2862-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 33/5 հասցեի բնակելի տան հողամասին կից 685,3 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 210,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 2862-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Որոշման 1-ին կետից «Շիրակացի փողոցի N 10գ հասցեի բնակելի տանը կից» թիվը և բառերը հանել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունվարի 2026 թվականի N 3002-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ № 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 29.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (22.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 78.89 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՍԱՅԻ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ) ԵՎ ՄԱՐՏԻՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ) ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 2-րդ թաղամաս № 17 հասցեի 78.89 (յոթանասունութ ամբողջ ութսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով անավարտ տունը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11082026-08-0045 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» պրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի № 153-Ա որոշումը և քաղաքացի Սուսաննա Գալիցի Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հուլիսի 18-ին № 12189 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 2-րդ թաղամաս № 17 հասցեի 29.79 (քսանինն ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (22.38 (քսաներկու ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 127084 (մեկ հարյուր քսանյոթ հազար ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով անավարտ բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Եսայի Մերուժանի Հովհաննիսյանին և Մարտին Մերուժանի Հովհաննիսյանին, որպես ընդհանուր բաժնային սեփականություն՝ յուրաքանչյուրին 1/2 մաս:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 2-րդ թաղամաս № 17 հասցեի 78.89 (յոթանասունութ ամբողջ ութսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 148155 (մեկ հարյուր քառասունութ հազար մեկ հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Եսայի Մերուժանի Հովհաննիսյանին և Մարտին Մերուժանի Հովհաննիսյանին, որպես ընդհանուր բաժնային սեփականություն՝ յուրաքանչյուրին 1/2 մաս:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Եսայի Մերուժանի Հովհաննիսյանը և Մարտին Մերուժանի Հովհաննիսյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Սահմանված կարգով քաղաքացիներ Մարտին Մերուժանի Հովհաննիսյանին և Եսայի Մերուժանի Հովհաննիսյանին տրամադրել անավարտ շինությունը ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք, անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Եսայի Մերուժանի Հովհաննիսյանի և Մարտին Մերուժանի Հովհաննիսյանի միջոցների հաշվին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Եսայի Մերուժանի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Восстановимая подпись
X
Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հոկտեմբերի 2026 թվականի N 3003 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի N2838-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 05-ի «Քաղաքացի Աշոտ Լյովայի Ասատրյանին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N225 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 75.9 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 110.6 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N2838-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած անճշտության պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 05-ի «Քաղաքացի Աշոտ Լյովայի Ասատրյանին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N225 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 75.9 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 110.6 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N2838-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման նախաբանում, 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում <<Լյովոյի >> բառը փոխարինել << Լյովայի >> բառով
   2)որոշման 2-րդ կետում <<Պարոնյան փողոց N79>> բառերը և թիվը փոխարինել << Սունդուկյան փողոց N225>> բառերով և թվով
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Աշոտ Լյովայի Ասատրյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հոկտեմբերի 2026 թվականի N 3004-Լ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հաստատել 2026 թվականի հոկտեմբերի 20-ին կայանալիք Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հերթական ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի
2026 թվականի հոկտեմբերի 19-ի N 3009 -Լ որոշման

ԿԱՋՄ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Մեքինյան Սարգիս- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական

2.Անտոնյան Արամ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

3.Մելիքյան Սիրանուշ-Գյումրի համայնքի ավագանու անդամ

4.Գևորգյան Ռուբեն-Գյումրի համայնքի ղեկավարի օգնական

5. Մալխասյան Աշոտ – Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տ.գ. թ. դոցենտ

6. Սահակյան Սեդրակ-Գյումրի համայնքի ղեկավարի օգնական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2026 թվականի №3005-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱՅԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 12,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0771-0004-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/2142-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի հարևանությամբ գտնվող 12,8 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0771-0004-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հաղթանակի պողոտա, 42/8 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԼՈՒՍԻՆԵ ՍԼԱՎԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19» հոկտեմբերի 2026 թվական N 3006 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հոկտեմբերի 15-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանի (ՀԾՀ՝6208810205, հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Հ/ԱԲ 2 թաղամաս, 140 շենք, 8 բնակարան) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանին անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի, Գորկու փողոց, 3-րդ նրբանցք, 36 հասցեի համար:

Գյումրի քաղաքի Գորկու փողոց, 3-րդ նրբանցք, 36 հասցեի համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի սեպտեմբերի 07-ի դրությամբ կազմել է՝ 253.160 (երկու հարյուր հիսուներեք հազար մեկ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 191.145 (մեկ հարյուր իննսունմեկ հազար մեկ հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 62.015 (վաթսուներկու հազար տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2021-2025 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրված տեղեկանք):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ . Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 253.160 (երկու հարյուր հիսուներեք հազար մեկ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 191.145 (մեկ հարյուր իննսունմեկ հազար մեկ հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 62.015 (վաթսուներկու հազար տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Восстановимая подпись

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԼՈՒՍԻՆԵ ՍԼԱՎԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19»«հոկտեմբերի»2026 թվական N 3007 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հոկտեմբերի 15-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանի (ՀԾՀ՝ 6208810205, հասցե՝ ք.Երևան, Մալաթիա Սեբաստիա Հ/ԱԲ 2 թաղամաս, 140 շենք, բնակարան 8) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանի հողի հարկի և շինության գույքահարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաք Գյումրի, Գորկու փողոց, 3-րդ նրբանցք, բնակարան 36 հասցեի համար:

Գյումրի քաղաքի Գորկու փողոց, 3-րդ նրբանցք, բնակարան 36 հասցեի համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի սեպտեմբերի 07-ի դրությամբ շինության գույքահարկի գծով կազմել է՝ 23.864 (քսաներեք հազար ութ հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 18.111 (տասնութ հազար մեկ հարյուր տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տուժը՝ 5.753 (հինգ հազար յոթ հարյուր հիսուներեք) Հայաստանի Հանրապետության

դրամ, հողի հարկի գծով կազմել է՝ 6.798 (վեց հազար յոթ հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 5.202 (հինգ հազար երկու հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 1.596 (մեկ հազար հինգ հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2019-2020 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համանքապետարանի աշխատակազմի բյուջե եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված թիվ 796842156523144912 և 296929784748144826 տեղեկանքը):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

01.01.2018 թվականին ուժի մեջ մտած և նույն պահին գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում՝

9) «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը: Նույն պահին գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-13-րդ մասերով սահմանված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում նույն մասերով սահմանված ժամկետներում:

21.12.2017 թվականի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքի 112-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասում՝ 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Համաձայն նույն օրենքի 111-րդ մասի 1-ին պարբերության 2-րդ կետի՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածում՝ 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: ...»

Նույն օրենքի 119-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ կետը, 112-րդ հոդվածի 3-րդ կետը ուղղ. և 113-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

25.06.2019 թվականի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Նույն օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններ ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:»:

Համաձայն նույն օրենքի 71-րդ հոդվածի վերջին պարբերության՝ սույն օրենքի 68-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն օրենքի 1-ին հոդվածը, 6-րդ հոդվածի 2-րդ կետը, 9-րդ և 10-րդ հոդվածները, 11-րդ հոդվածի 3-րդ կետը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 15-րդ և 17-րդ հոդվածները, 18-րդ հոդվածի 1-ին կետը, 24-րդ, 27-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածները, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը, 38-րդ, 48-56-րդ, 60-րդ, 63-67-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը գործել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում. 1. շենքերը և շինությունները (այսուհետ՝ շինություններ):

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն ինդիկատորը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով և

կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում՝ 1) շինությունների հարկման բազա է համարվում սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն և տարեկան հաշվարկները կարող են մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել՝ 1) հարկվող օբյեկտ համարվող շինության համար՝ շինության գտնվելու վայրի հաշվառող մարմին:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1–ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ 1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի, «Գույքահարկի մաին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի 1-ին մաս, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 4–րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին,2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88–րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 30.662 (երեսուն հազար վեց հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 23.313 (քսան երեք հազար երեք հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 7.349 (յոթ հազար երեք հարյուր քառասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Լուսինե Սլավիկի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2026.10.19 12:33:30 GMT+4
Համայնապետ ԵՂԵՆԳի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունվարի 2026 թվականի №3008-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 450.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2129-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արևելյան շրջանցող ճանապարհի հարևանությամբ գտնվող 450.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Արևելյան շրջանցող ճանապարհ, 22 հողամաս
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հոկտեմբերի 2026 թվականի N3009-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 565.13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 376.78 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ԳՐԻԳՈՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Դեկաբրիստների փողոցի հարևանությամբ գտնվող 376.78 (երեք հարյուր յոթանասունվեց ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է 565.13 (հինգ հարյուր վաթսունհինգ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Աղասի Գրիգորի Մաթևոսյանը:

Քաղաքացի Աղասի Գրիգորի Մաթևոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Աղասի Գրիգորի Մաթևոսյանի՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հուլիսի 3-ին № 12157 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Ճանաչել քաղաքացի Աղասի Գրիգորի Մաթևոսյանի (ծնված 1985 թվականի ապրիլի 26-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Դեկաբրիստների փողոցի հարևանությամբ գտնվող 376.78 (երեք հարյուր յոթանասունվեց ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աղասի Գրիգորի Մաթևոսյանին պատշաճ կարգով իրազելու օրվան հաջորդող օրվանից:

3.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՌՈԶԱ ԳԱԳԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«20»«նոյեմբերի»2026 թվական N 3040 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հոկտեմբերի 19-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ռոզա Գագիկի Ասատրյանի (ՀԾՀ՝5601920508, հասցե՝ ք.Գյումրի, Կոմիտասի փողոց, 4-րդ փակուղի, տուն 2) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Ռոզա Գագիկի Ասատրյանի անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են

սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի, Կոմիտասի փողոց, 4-րդ փակուղի, տուն 2 հասցեի համար:

Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց, 4-րդ փակուղի, տուն 2 հասցեի համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի օգոստոսի 17-ի դրությամբ կազմել է՝ 45.591 (քառասունհինգ հազար հինգ հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 34.462 (երեսունչորս հազար չորս հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 11.129 (տասնմեկ հազար մեկ հարյուր քսանինը) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2022-2025 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրված տեղեկանք):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների

հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Ռոզա Գագիկի Ասատրյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 45.591 (քառասունհինգ հազար հինգ հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 34.462 (երեսունչորս հազար չորս հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 11.129 (տասնմեկ հազար մեկ հարյուր քսանինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի՝ Ռոզա Գագիկի Ասատրյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռոզա Գագիկի Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

X

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 20 >> հոկտեմբերի 2026 թվականի N 3011 -Ա

<< ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ս.Դ. ՄԵՐԿՈՒՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԺԱԿԼԻՆԱ ԱՐՏԱՇԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Ժակլինա Արտաշեսի Սարգսյանի 2026 թվականի հոկտեմբերի 20-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ս. Դ. Մերկուրովի անվան նկարչական դպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ժակլինա Արտաշեսի Սարգսյանին տրամադրել 2026 -2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի նոյեմբերի 2-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 6 աշխատանքային օր՝ 2026 թվականի նոյեմբերի 2-ից 7-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Ժակլինա Արտաշեսի Սարգսյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության փոխտնօրեն Ստելլա Սերգեյի Ստեփանյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ժակլինա Արտաշեսի Սարգսյանին և Ստելլա Սերգեյի Ստեփանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունվարի 2026 ԹՎԱԿԱՆԻ N 30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 46Գ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մ.Խորենացու փողոց 46Գ հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 02102026-08-0016 վկայական):

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի № 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով Գյումրի քաղաքի Մ.Խորենացու փողոց 46Գ հասցեի հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս:

Անհրաժեշտություն է առաջացել Գյումրի քաղաքի Մ.Խորենացու փողոց 46Գ հասցեի 483,0(չորս հարյուր ութսուներեք ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության և 221,42 (երկու հարյուր քսանմեկ ամբողջ քառասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նպատակային նշանակությունը բնակելիից հասարակական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը որպես «Շախմատի տուն» փոփոխելու:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի № 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի»՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 27-ի «Քաղաքացիներ Լեռնուհի Համբարձումի Պապոյանին (1/12), Ռուզաննա Կարլենի Գալոյանին (1/12), Արտյոմ Կարլենի Գալոյանին (1/12), Սերգեյ Ալբերտի Հարությունյանին (1/4), Լենա Արտավազդի Ղուկասյանին (1/4), Հրաչյա Ռուբենի Գալոյանին (1/4) պատկանող Գյումրի քաղաքի Աղայան փողոց N69 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 144.1 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 27.8 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 2473-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1). Նախաբանում «2026VQMZPO» թվերը և տառերը փոխարինել «2026VQMZPQ» թվերով և տառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**



mID

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> հոկտեմբերի 2026 թվականի N 3054-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՒՐԵՆԻ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սյուզաննա Սուրենի Վարդևանյանի 2026 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Սյուզաննա Սուրենի Վարդևանյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2026 թվականի հոկտեմբերի 26-ից:

2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 3 աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 26-ից 28-ը ներառյալ:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Սյուզաննա Սուրենի Վարդևանյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Գայանե Միսակի Բաղրամյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սյուզաննա Սուրենի Վարդևանյանին և Գայանե Միսակի Բաղրամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3055-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1986-Ա ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 873-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացի Թամարա Սիմոնյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 23-ին N 17006 թվագրմամբ)՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2015 թվականի հոկտեմբերի 27-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացիներ Կարլեն Հայկարամի Միքայելյանի, Թամարա Ռուբենի Սիմոնյանի, Գայանե Կարլենի Միքայելյանի, Նարինե Կարլենի Միքայելյանի և Լենիկ Դանիելի Միքաելյանի հետ բնակելի տարածության օգտագործման վարձակալության պայմանագիր կնքելու մասին (բարենպաստ վարչական ակտ) մասին» N 1986-Ա և 2016 թվականի մայիսի 24-ի «Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, Օլեգ Կոշևոյի փողոց N 38/6 հասցեի բնակելի ու օժանդակ շինությունները քաղաքացիներ Կարլեն, Թամարա, Գայանե, Նարինե, Լենիկ Միքայելյաններին վարձակալության տրամադրելու մասին» N 873-Ա որոշումները:
2. Լուծել հողամասի և անշարժ գույքի վարձակալության 2016 թվականի մարտի 10-ի և նոյեմբերի 09-ի (գրանցված սեղանամատյանում համապատասխանաբար N 1272, 7355) պայմանագրերը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե N 17032016-08-0055 և N 14112016-08-0004 վկայականները չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Կարլեն Հայկարամի Միքայելյանին, Թամարա Ռուբենի Սիմոնյանին, Գայանե Կարլենի Միքայելյանին, Նարինե Կարլենի Միքայելյանին և Լենիկ Դանիելի Միքաելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-10-22 14:33:02 GMT+4

Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՀԱԿՈԲ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԽԿՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«22»«----------» 2026 թվական N 3056 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հոկտեմբերի 21-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Հակոբ Գուրգենի Վխկրյանի (ՀԾՀ՝3709870232, հասցե՝ ք.Գյումրի, Ջիվանու 109) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Հակոբ Գուրգենի Վխկրյանին անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել

են սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի, Մ. Շչեդրինի փ. 1/12 հասցեի համար:

Գյումրի քաղաքի Մ. Շչեդրինի փ. 1/12 հասցեի համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի սեպտեմբերի 09-ի դրությամբ կազմել է՝ 211.745 (երկու հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 160.820 (մեկ հարյուր վաթսուն հազար ութ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 50.925 (հիսուն հազար ինը հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2024-2025 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրված տեղեկանք):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների

հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Հակոբ Գուրգենի Վխկրյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 211.745 (երկու հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 160.820 (մեկ հարյուր վաթսուն հազար ութ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 50.925 (հիսուն հազար ինը հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի՝ Հակոբ Գուրգենի Վխկրյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Հակոբ Գուրգենի Վխկրյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

X

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2026 թվականի N 3057-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԼՈՒՍԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով երկու լուսացույցների տեղադրման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝
1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Անդրանիկ Չադրյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հարություն Մխիթարյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հունվարի 2026 թվականի N 305Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԼՈՒՍԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով երկու լուսացույցների տեղադրման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2026 թվականի N 3059-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 23/24 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 198,33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 114,54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 87,39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 23/24 հասցեի հողամասի հարևանությամբ 198,33 (մեկ հարյուր իննսունութ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցվել է 114,54 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 87,39 (ութսունյոթ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Էդգար Սամվելի Կյուրեղյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2026CG7PUV տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 23/24 հասցեի հողամասի հարևանությամբ 198,33 (մեկ հարյուր իննսունութ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և դրա վրա ինքնակամ կառուցված 114,54 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 87,39 (ութսունյոթ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Էդգար Սամվելի Կյուրեղյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էդգար Սամվելի Կյուրեղյանի կողմից լիազորված անձ Կարեն Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2026 թվականի N 3060-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2729-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 28-ի «Քաղաքացիներ Նելլի Ալեքսանի Սիմոնյանին, Ռազմիկ Գրիշայի Սիմոնյանին, Գոհար Ընձակի Սիմոնյանին և Վահե Ռազմիկի Սիմոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 10գ հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 69,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը, ինքնակամ բացված 1 պատուհանն օրինական ճանաչելու մասին» N 2729-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 28-ի «Քաղաքացիներ Նելլի Ալեքսանի Սիմոնյանին, Ռազմիկ Գրիշայի Սիմոնյանին, Գոհար Ընձակի Սիմոնյանին և Վահե Ռազմիկի Սիմոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 10գ հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 69,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը, ինքնակամ բացված 1 պատուհանն օրինական ճանաչելու մասին» N 2729-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Նախաբանում և որոշման 1-ին կետում «69,6 (վաթսունինն ամբողջ վեց տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «69,9 (վաթսունինն ամբողջ ինը տասնորդական)» թվով և բառերով,
   2) Որոշման 1-ին կետում «192385 (մեկ հարյուր իննսուներկու հազար երեք հարյուր ութսունհինգ)» թիվը և բառերը փոխարինել «193203 (մեկ հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր երեք)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2026 **թվականի** N 3062-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ N 31 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ N 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չարենցի փողոցի N 31 հասցեի շենքի N 9 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Աննա Գագիկի Գևորգյանին (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2376805 վկայական):

Քաղաքացի Աննա Գագիկի Գևորգյանի կողմից լիազորված անձ Մանուշակ Գևորգյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին, սեփականության իրավունքով Աննա Գագիկի Գևորգյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չարենցի փողոցի N 31 հասցեի շենքի N 9 հասցեի 65,98 (վաթսունհինգ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը, որպես առևտրի սրահ փոփոխելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և քաղաքացի Աննա Գագիկի Գևորգյանի կողմից լիազորված անձ Մանուշակ Գևորգյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հունիսի 25-ին N 10702 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չարենցի փողոցի N 31 հասցեի շենքի N 9 հասցեի 65,98 (վաթսունհինգ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը, որպես առևտրի սրահ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին քաղաքացի Աննա Գագիկի Գևորգյանի կողմից լիազորված անձ Մանուշակ Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026.06.23 10:20:49 GMT+4

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2026 թվականի N 3063-Լ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հաստատել 2026 թվականի հոկտեմբերի 26-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժինների առաջատար, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի 1-ին կարգի մասնագետների թափուր պաշտոնների համար անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի
2026 թվականի հոկտեմբերի 23-ի N 3063-Լ որոշման

ԿԱԶՄ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Մեքինյան Սարգիս- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական

2.Մարտիրոսյան Նաիրա- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության ավագ մասնագետ

3.Տիրայան Լևոն-Գյումրի համայնքի ավագանու անդամ

4.Ղարիբյան Գագիկ- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի 1-ին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

5. Էլոյան Ասատուր – Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տ.գ. թ. դոցենտ

6.Վարդանյան Հրաչիկ-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2026 թվականի N 3064-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ 60 ԼՈՒՍԱԿԵՏԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով 60 լուսակետերի մոնտաժման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3065-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ 60 ԼՈՒՍԱԿԵՏԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<ղ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով 60 լուսակետերի մոնտաժման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Անդրանիկ Չադրյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հարություն Մխիթարյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2026 թվականի N 3066-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի № 2785-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովայի փողոց № 4/10 հասցեի 11.99 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 2785-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **որոշում եմ.**

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովայի փողոց № 4/10 հասցեի 11.99 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 2785-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1. Նախաբանում, Որոշման 1-ին, 4-րդ և 5-րդ կետերում «Արամայիս Հելսինկի Ղազարյանի» բառերը փոխարինել «Արամայիս Հելսենիկի Ղազարյանի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արամայիս Հելսենիկի Ղազարյանի պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«23» հոկտեմբերի 2026 թվականի №3067-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի №2654-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/2053-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 17-ի №2654-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված ավտոտնակին, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Տիգրան Մեծի փողոց, 4-րդ նրբանցք, 22 ավտոտնակ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3068-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի № 2844-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անանիա Շիրակացու փողոց №181/16 հասցեի 251.2 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 2844-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **որոշում եմ.**

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անանիա Շիրակացու փողոց №181/16 հասցեի 251.2 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 2844-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Որոշման 4-րդ կետում «Արամայիս Հելսինկի Ղազարյանի և Ռոզա Միքայելի Միքայելյանի» բառերը փոխարինել «Արշակ Ռաֆիկի Մանուկյանի» բառերով:
   2) Որոշման 5-րդ կետում «Արամայիս Հելսինկի Ղազարյանին» բառերը փոխարինել «Արշակ Ռաֆիկի Մանուկյանին» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արշակ Ռաֆիկի Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից::

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

Подписано ARAKELYAN AVETIS 3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> հոկտեմբերի 2026 թվականի N 3069 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԿՈՒՄԱՅՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԻՆԳԱ ԷԴՈՒԱՐԴԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ինգա Էդուարդի Ավագյանի 2026 թվականի հոկտեմբերի 20-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ինգա Էդուարդի Ավագյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2026 թվականի հոկտեմբերի 24-ից:

2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև նոյեմբերի 4-ը ներառյալ:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Ինգա Էդուարդի Ավագյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության գիտաշխատող Օսաննա Հովհաննեսի Հովհաննիսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ինգա Էդուարդի Ավագյանին և Օսաննա Հովհաննեսի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> հոկտեմբերի 2026 թվականի N 3070 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ԴԵՐԵՆԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կարեն Դերենիկի Գալստյանի 2026 թվականի հոկտեմբերի 23-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Դերենիկի Գալստյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2026 թվականի հոկտեմբերի 26-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 6-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Կարեն Դերենիկի Գալստյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Գրետա Վոլոդյայի Ջանոյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Դերենիկի Գալստյանին և Գրետա Վոլոդյայի Ջանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք.Գյումրի